ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պատրաստվել է Նախարարության 2021թ. բյուջեի նախագիծ. ամփոփվել և կազմվել են ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունների հավելվածը, կապիտալ ծախսերի հավելվածները, դրամաշնորհի ձևով ֆինանսավորվող ծրագրերի հավելվածը
2. Կազմվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ ինն ամսվա կատարողական/վերլուծական հաշվետվությունը (մուտքագրվել է LS FINANCE էլեկտրոնային համակարգ), ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող ծրագրերի՝ 2020թ. ինն ամսում նախատեսված բյուջետային հատկացումների և սահմանաքանակների չիրացման վերաբերյալ բացատրագիրը
3. Կատարվել է հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերի համար նախատեսված կարգի փոփոխություն /ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 47-Ն հրաման/
4. Իրականացվել է ավագ դպրոցների հաստիքացուցակների և տարիֆիկացիաների ստուգում և ներկայացում գլխավոր քարտուղարի հաստատմանը
5. Կատարվել են համապատասխան աշխատանքներ գանձապետական հաշիվների կառավարման Client Treasury էլեկտրոնային համակարգում
6. Ուսումնասիրվել և վերլուծվել են կրթության, գիտության ոլորտի կազմակերպությունների ընթացիկ հաշվետվությունները, պատրաստվել են և ներկայացվել են հաստատման համապատասխան ֆինանսավորման հայտեր («Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ)
7. Կատարվել են մի շարք հաշվարկներ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կապիտալ ծախսերի իրականացման համար (պատրաստվել են ամփոփ տեղեկանքներ, պրեզենտացիաներ)
8. Պատրաստվել և գլխավոր քրատուղարի հաստատման են ներկայացվել կապիտալ դրամաշնորների պայմանագրեր, ընդունվել և ստուգվել են 2019-2020թթ. որոշ կապիտալ դրամաշնորհների հաշվետվություններ
9. Պատրաստվել են ՀՀ կառավարության որոշման նախագծեր՝ 2020 թվականի պետական բյուջեի վերաբաշխման միջոցով կապիտալ ծախսերի իրականացման

համար (ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 8-ի N 1988-Ն որոշում, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2115-Ն որոշում):

10. Պատրաստվել են մի շարք հրամաններ՝ ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի հունվարի 17-ի ««ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը հատկացված միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացներն իրականացնելու նպատակով պատասխանատու ստորաբաժանումներ, գնումների համակարգող և գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը հաստատելու մասին» N 01-Ա/3 հրամանում մի շարք փոփոխություններ և լրացումներ (հրամաններ՝ 07.10.2020թ. N 270-Ա/3, 03.12.2020թ. N 282-Ա/3, 08.12.2020թ. N 283-Ա/3, 18.12.2020թ. N 284-Ա/3,)

Բացի վերը նշված աշխատանքներից իրականացվել է նաև.

- Աշխատանք Armeps և PPCM համակարգերում (վճռված արձանագրությունների ստուգում և հաստատում/մերժում, աշխատակարգային տվյալների կցում համապատասխան բաժիններին, պայմանագրերի, ԳՊ փոփոխման հայտերի ստուգում և հաստատում և այլն):
- Կազմվել են մի շարք գրություններ, կատարվել մի շարք հանձնարարականներ (ՀՀ վարչապետի, ՀՀ Ազգային Ժողովի, ԱԺ առանձին պատգամավորների, ՀՀ ֆինանսների նախարարության և այլ պետական մարմինների), տրամադրվել է պահանջվող տեղեկատվություն համապատասխան մարմիններ և կազմակերպություններ, կատարվել են այլ աշխատանքներ:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՍՈՖԻԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«16» «հունվարի» 2021թ.